

ՅԱԹՈՂԱԲԵՆՍՈՒՆԻՔ ՀԱՅՅԻՆ*

(Καθολικοί της Αρμενίας)

Ս. Գրիգոր Լուսավորիչ. *ամս. Լ.*
 Ս. Ռբրտակն որդի նորա. *ամս. Բ.*
 (Ս.) Վրթանէս. *Գ.*
 Գրիգորիս. *ամս. ԺԱ.*
 Յուսիկ. *ամս. Զ.*
 Փաննբրեհ յԱսպրակաց¹ գաւառէ. *ամս. Գ.*
 Ս. Ներսէս. *ամս. ԼԳ.* Զսա սպան Փարսի².
 Ազա նոյնպէս Յուսիկ³. *ամս. Գ.*
 Զադինէս⁴. *ամս. Գ.*
 Ասպրաւիկէս. *ամս. Է.* Երեքեան սոքա
 Ահարք (Հարք) գաւառի էին եպիսկոպոսք, և
 անուամբ միայն կաթողիկոսք. և ոչ իշխելին
 եպիսկոպոս ձեռնադրել. քանզի վասն սպա-
 նութեան Ս. Ներսիսի բարձին արքեպիսկո-

* Դիտել կու տանք՝ որ այս մասնական խո-
 րագրով հրատարակուած մեր կաթողիկոսաց
 ժամանակագրական ցանկը — Գր. Լուսավորչէն
 սկսած մինչեւ Սահակ Գ — մասն եւեթ է Դե-
 մետրիոս կիզիկեցւոյ ընծայուած և երկիցս և
 երկցս հրատարակուած աւելի ընդարձակ մի
 գրութեան, որուն ընդհանուր խորագիրն է. Յա-
 ղագս Յակոբիկեանց և Խաչնցարեանիկն, յու-
 րում Հայոց եկեղեցական պատմութեան էա-
 կան մասունքը կը ճառուին սկիզբէն՝ մինչեւ Է
 զոր: Բազմալիպի նպատակէն զուրս լինելով
 կրօնական գրուածներով ճոխագիրն, որոնք կա-
 րող են թեր ու դժժ խորհրդածութեանց նիւթ
 լինել, ուստի առ այժմ պատշաճ համարեցանք
 այս մասը միայն ի լոյս ընծայել: որոյ մասին
 պէտք եմ ըսել, թէ շատ տայլուութիւններ
 կրած է: թէ յայն թարգմանի, թէ ընդօրինա-
 կողաց և թէ հրատարակչաց ձեռքէն: Այդպիսի
 տայլուութիւններ զգալի են մասնաւորապէս
 անուններու և տարբերութեան մէջ. առաջիններն
 ըստ կարելոյն ջանացինք ուղղել իսկ վեր-
 ջինները այնպէս թողինք, ինչպէս որ են:

1. Այս անուամբ դաւառ մի յիշուած չէ մեր
 մասնագիրներէն, հետեւաբար ուղղելի է կամ
 ի վասպոյնական, և կամ յԱսպակոնեաց
 Փառասոս և Խորենացի՝ Տարսոնոյ Աշտիշառ գիւ-
 ղէն կ'աւանդին զՓաննբրեհէ:

պատուք կեսարիոյ զիշխանութիւն ձեռնա-
 պրութեան Հայոց Մեծաց: Յետ նոցա Ս.
 Խահակ ընկալաւ իշխանութիւն ձեռնագրու-
 թեան եպիսկոպոսաց ի Հայս, և եկաց քա-
 հանայապետ ամս քառասուն: Բայց յետ
 ամաց ինչ ամբաստանելով Հայոց զժողովու-
 արէն իւրեանց Արասըրէ և զՄրբոյն իտա-
 հակայ՝ առ թագաւորն Պարսից՝ Վասմ-Շա-
 պուհ, իրբեւ համախոհք ընդդէմ նորին՝ ար-
 կին զնա յաթոռոյ: Եւ յետ զահլինեցութեան
 Խահակայ՝ հրամանաւ թագաւորին Պարսից
 և իւրեանց կամակեցութեամբ զՍուրմակ յԱրծ-
 կէոյ կացուցանին կաթողիկոս, շարախոս լի-
 նելով զՍահակայ: — Բայց ատեցեալք և
 զնա՝ մերձեցին յաթոռոյ, և ինդրեցին ի թա-
 գաւորէն Պարսից ստելով: Տուր մեզ առաջ-
 նորդ յերկրէ քումմէ, և մի կացցէ մեզ կա-
 թողիկոս հայ: Եւ ետ նոցա թագաւորն այր
 Պարսիկ-Ասորի⁵, Այլ և զնա յետ ամաց
 ինչ խտտելով մերձեցին: Ապա զարձեալ ետ
 նոցա զՄուսուշիւն⁶ Ասորի, որ կացեալ ամս

- 2. Այսինքն է՝ Պապ:
- 3. Մեր պատմագիրներուն ձանձօթ չէ Յու-
 սիկս. ուստի կամ հակակաթողիկոս մ'եղած
 ըլլալու է, և կամ յաջորդն Խաչայ՝ Ասորի
 (տես Բուզանդ, Պատմ. Գ. չոր. զլ. ԺԱ). բայց
 որովհետեւ գրուածին հեղինակն՝ Խաչը բնաւ չի
 յիշեր, հաւանական է կարծել որ կամ Յուսիկ՝
 Խաչայ պիտակ անունն էր, և կամ նա Յու-
 սիկը ճանաչելու զգած է վերտարն կաթողիկոսս:
- 4. Սխալ ձեւ մ'է Զառէն անունան, զոր կը
 յիշեն բուզանդացիք և Խորենացիք իրբեւ եպիս-
 կոպոսապետ. այս սկիներեւ է անոր կաթողի-
 կոսութեան տրուած 5 տարիներէն իսկ, որ հա-
 մաձայն է Խորենացւոյն:
- 5. Սա է, ըստ Խորենացւոյ (Գիրք Գ. զլ. ԿԴ)
 Բրդիշոյ:
- 6. Այս անուն Մուշեղայ աղաւաղեալ ձեւ
 մի պիտի համարէինք, ըստ նմանաձայնու-
 թեան. բայց որովհետեւ Խորենացիք՝ Բրքէշոյի
 յաջորդել կու տայ անմիջապէս զԾմուէլ ա-
 սորի, և գրուածին հեղինակն իսկ՝ Բաբգէնէն
 վերջ՝ կը յիշէ նախ զՄուսուշի, և ապա Մու-
 շեղ. ուրեմն կամ այս տեղ յիշուած Մուսու-
 շիան (Μουσουλλος) մի ուրիշ անձն ըլլալու է,
 և կամ Ծմուէլ անուն խանգարուած մի տեղի
 ունեցած է:

երկուս , բազում ներութեամբ վճարեաց
 զկեանսն : Այսպէս դադարեաց ձեռնադրու-
 րիսն արեւելից՝ արեղեւմամբ կեսարիոյ՝ վասն
 սերտեղոյն զիտանակ շարտոյ¹ : Յետ այնու-
 րիկ երթեալ աղատաց աղաչէին զՍ . Սահակ ,
 զի անյիշալար նոցա լինիցի և վերադարձցի
 յաթոռ իւր . այլ նա ամենեւին ոչ անսաց
 նոցա : Եւ յայնժամ պատեմաց նոցա զոր
 երբեմն տեսեամբ ետես զզիպալ և զլինելոյց
 կործանումն նոցա : Եւ կարգեաց փոխանակ
 իւր տեղապահ աթոռոյն զՄաշտոց : Իսկ
 իբրև կատարեցան իսահակ և Մաշտոց ,
 կացուցին յաթոռ քահանայութեան զԳիւս ի
 զեղղէ Ալմսու² , որ կիաց ամս եօթն և տասն :
 Աս սովառ հրամայեաց քազառքն Պարսից ,
 զի ի Հայս ձեռնադրեցին կարողկոսք և
 եպիսկոպոսուանք , մինչեւ ցորս այս : Յետ
 որոյ Յովհաննէս Մանգակունի ամս 9 .

Արտիրքինիս (Ապա Բարզէն) ի զեղղէ
 Մեռու , ամս . Ե .

Սամուէլ ի զեղղէ Արտասու³ , ամս . ԺԲ .
 Մուշեղ ի զեղղէ Արբորից⁴ , ամս . Ծ(Ժ) .
 Իսահակ յԱրզանայ⁵ . ամս . Է .

Քրիստափոր ի Կորարիծոյ⁶ . ամս . Զ .
 Էնտոզ յԱրիտայ⁷ . ամս . Գ .

Ներսէս յԱպարաքսայ (յԱշտարակայ) ,
 ամս . Թ : Աս սովառ եղև ժողովն Գունայ յԱր-
 զիսոյէ Ասորոյ Յակոբկէ : Թէպէտ և ի Սորոյն
 Գրիգորի և յայլոց հարցն աւանդութեանց
 խոսորեալ էին , սակայն զհաւատոց և զժո-

ղովոյն Քաղկեդոնի և զերկուց բնութեանց
 Քրիստոսի չէր նոցա երկբայեալ ցամա ճԳ .
 յետ ժողովոյն Քաղկեդոնի , մինչև ի ժողովն
 Գունի : Յետ այնորիկ ի բաց կացին ի հա-
 զորդութեանէ Հովմայեցեաց , և նպովելով զե-
 պիսկոպոսոս և զժողովն Քաղկեդոնի , մի բնու-
 թին զաւանցեցին Քրիստոսի՝ զաստուածայինն
 և զմարդկայինն , և յերգն երեքսորբեան Սառբ
 Աստուածն՝ յաւելին զՍր Խաչեցարն . և երգ-
 մամբ ուխտիք և իւրեանց ձեռամբք ստու-
 բազրելով զաշնագիր եղևն միմեանց՝ չկալ
 ի բաց յայնմ զաւանութեանէ մինչև յաւե-
 տեան : Ապա զԵստիքեան Յակոբիկն , և զեր-
 կոսին ընկերս նորա , սրոց մին Յուլիանիտ
 էր , միսն այլով հերձուածով աղանդեալ՝
 ձեռնադրեալ յեպիսկոպոս արձակեցին ի Մի-
 շպետոս :

Յետ նորա Յովհաննէս ի Գաբեղնից՝
 ամս . ԺԷ .

Մովսէս յԵղիվարայ , ամս . Լ .
 Աբրահամ յԸրըշտունեաց , ամս . ԻԳ .

Յովհաննէս ի Բազարանէ , ամս . ԻԶ .
 Կոմիտաս ի զեղղէ Ելծիս Արգածու (Աղ-
 ջից Արագածու) , ամս . Ը .

Քրիստափոր Աբրահամեան , ամս . Գ .
 Եղր ի Նշայ , ամս . Ժ .

Ներսէս յԵղիանայ , ամս . Թ .
 Անաստաս ի Կորայ (յԱլիոսոյ) , ամս . Զ .

Իսրայէլ ի զեղղէ Օթմսու , ամս . Ժ .
 Իսահակ ի Բազարեղլէ⁸ :

1. Նօտրադուած խօսքս , այնպիսի մի պատ-
 մական ակնարկութիւն է , զոր մեր ուրիշ մա-
 տենագրաց քով չենք գտնիր - զի այսպիսի խա-
 փանուսն մի՛ մեծին Ներսիսի օրով կատարուե-
 ցաւ : Ս . Բարսէլէ ձեռքով իսկ արդ եթէ Ս .
 Սահակայ զահընկեղեցութեան պատեմուտեւ
 նոյն արգելքը կրկնուած է երբեք կեսարիոյ
 եպիսկոպոսապետին կամ Մետրապօլտի կող-
 մէն , զա կը նշանակէ : Թէ մինչև Ս . Սահակ
 իսկ՝ Հայոց եպիսկոպոսապետները ձեռնադրե-
 լու իրաւասութիւնը իրենց կը վերապահէին
 կեսարիոյ մետրապօլտները , և Թէ Գիւս (օրի-
 նաւոր կաթողիկոսաց մէջ) առաջին անգամ ի
 Հայս ձեռնադրուած ըլլայ՝ հրամանագրով ար-
 քայից արքային , կամ ըստ իս՝ առանց անոր ,
 ինչպէս կը զրէ զրէն անծանօթ քիւ եաքը :

Քննութեան արժանի կէտ մ'է այս , ինչպէս
 այլուր անորադարձուցած ենք :
 2. Աւղշէլէ և Սրմուս , Սրմուս . Նոյնպէս
 յետոյ Բաբգինի համար Միստոս ըսածը :
 3. Աւղշէլէ է՝ Արծկնոյ :
 4. Այսինքն՝ Արբեղանից :
 5. Աւղշէլէ է՝ Հարթայ :
 6. Աւղշէլէ և Տիրատանոյ :
 7. Առնասոյ կը զրէն ուրիշ զաւազանագրեք ,
 որ աւելի ուղղիչ է :
 8. Բնագր . βαχααααααααααα : Գաւազանագիր մի
 այն է՝ Շարաղորտոյիս հայրապետացն Հայոց ,
 կը զրէ այս կաթողիկոսին համար . « Հայրե-
 նեաւք (էր) ի Զորոյփորոյ , ի զեղղէ Արքայա-
 չինէ , և մարտնեաւք՝ ի Մազմաշայ՝ ի զեղղէ
 Բերդկանց :
 Է . Բ . ՍԱՐԳԻՍԵԱՆ